

ՔԱՂՎԱԾՔ # 1

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ք. Երևան

30 ապրիլի 2015թ.

Հարց 2. «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ 2014 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների և շահույթի բաշխման վերաբերյալ:

1. Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ՝ զեկույցով ելույթ ունեցավ Ընկերության գլխավոր հաշվապահ Լիլիթ Դունամայանը: Ներկայացնելով Ընկերության 2014թ տարեկան գործունեությունը՝ զեկուցողը ներկայացրեց Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները, ակտիվների, եկամուտների և ծախսերի կառուցվածքը, Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան շահույթի բաշխման առաջարկը՝ 2014 թվականի գործունեության արդյունքներով ստացված շահույթի 5%-ը, որը կազմում է 32,071,215.00 (երեսուներկու միլիոն յոթանասունմեկ հազար երկու հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ ուղղել Ընկերության պահուստային հիմնադրամի համալրմանը, իսկ շահույթի մնացած մասը՝ 609,353,094.00 (վեց հարյուր ինը միլիոն երեք հարյուր հիսուներեք հազար իննսունչորս) ՀՀ դրամ որպես չբաշխված շահույթ թողնել «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ տրամադրության տակ:

Օրակարգի երկրորդ հարցի քվեարկության արդյունքները հետևյալն են.

կողմ՝ 100% ձայներին տնօրինող բաժնետեր

դեմ՝ չկա

ձեռնպահ՝ չկա:

Քվեարկության արդյունքում ժողովը միաձայն

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Ընկերության 2014 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և շահույթի բաշխման առաջարկը՝ 2014 թվականի գործունեության արդյունքներով ստացված շահույթի 5%-ը, որը կազմում է 32,071,215.00 (երեսուներկու միլիոն յոթանասունմեկ հազար երկու հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ ուղղել Ընկերության պահուստային հիմնադրամի

համալրմանը, իսկ շահույթի մնացած մասը՝ 609,353,094.00 (վեց հարյուր ինը միլիոն երեք հարյուր հիսուներեք հազար իննսունչորս) ՀՀ դրամ որպես չբաշխված շահույթ թողնել «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ տրամադրության տակ:

Նիստը նախագահող՝

Արթուր Զավադյան

Նիստի քարտուղար՝

Մայրանուշ Գրիգորյան